ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2013 թվականի ,,Պետական բյուջեի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 03 ծրագրի ,,4729 սոցիալական օգնություն դրամական արտահայտությամբ նպաստներ բյուջեից,, հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Մարզպետարանին հատկացված միջոցներից 100.000 /մեկ հարյուր հազար/ դրամ հատկացնել 2012-2013 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլում 1-ից 3-րդ կարգի դիպլոմներ շահած մարզի ներքոհիշյալ աշակերտներին յուրաքանչյուրին 10000 /տաս հազար/ դրամի չափով պարգևատրելու համար՝

   Պողոսյան Արամ
   Զազյան Հասմիկ
   Առուստամյան Անահիտ
   Քոչարյան Լուսինե
   Ավետիսյան Մարիամ
   Կոստանյան Աննա
   Հովհանյան Լիլիթ
   Նահապետյան Վարդան
   Իսրայելյան Հասմիկ
   Գրիգորյան Հայկուհի

2. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բաղեյանին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ Համբարձում Սաֆարյանի միջոցով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ